Ընդ որում, վերոնշյալի, գործի քննության ընթացքում դատական այլ ծախսերի հետ կապված պահանջների մասով գրավոր միջնորդություն ներկայացված չլինելու և գործի քննության հետ կապված այլ ծախսերը հավաստող ապացույցների բացակայության պայմաններում Դատարանը կարծում է, որ մնացած մասով դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

VI. Եզրափակիչ մաս.

Դատարանը, հիմք ընդունելով ամբողջ վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով, 17-րդ հոդվածի 7-րդ մասով, 27-րդ հոդվածի 2-րդ մասով, 179-րդ, 188-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 360-362-րդ հոդվածներով,

ՎՃՌԵՑ

1. «ՊՐՈ ՇԻՆ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ պատասխանող ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի՝ «Պրո Շին» ՍՊ ընկերության և Ապարանի համայնքապետարանի միջև 31.10.2025թ. կնքված թիվ «ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-104/25-1» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Վճիռը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ այն հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Ազատ Դունամայյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE36-B7FD-48A2-A372 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am